# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2026թ. № 87-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշման 1-ին գլխի 2-րդ կետը՝

**որոշում եմ.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի «Քաղաքացիական պաշտպանության պլան»-ը, համաձայն հավելվածի.

1) ՀՀ Լոռի Բերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության վիճակի հիմնական ցուցանիշները՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

2) ՀՀ Լոռի Բերդ համայնքի տարածքում հնարավոր իրավիճակի և բացատրագիր պլանը՝ համաձայն թիվ 2 հավելվածի,

3) ՀՀ Լոռի Բերդ համայնքի տարածքի քիմիապես վտանգավոր օբյեկտների վերաբերյալ տվյալները՝ համաձայն թիվ 3 հավելվածի,

4) ՀՀ Լոռի Բերդ համայնքի ՔՊ ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն թիվ 4 հավելվածի,

5) «Բարձր» և «Լրիվ» պատրաստականության աշխատակարգի միջոցառումների ցանկը՝ համաձայն թիվ 5 հավելվածի,

6) ՀՀ Լոռի Բերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզության և բացատրագիր պլանը՝ համաձայն թիվ 6 հավելվածի,

7) ՀՀ Լոռի Բերդ համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն թիվ 7 հավելվածի,

8) ՀՀ Լոռի Բերդ համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը՝ համաձայն թիվ 8 հավելվածի,

9) ՀՀ Լոռի Բերդ համայնքի բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն թիվ 9 հավելվածի,

10) ՀՀ Լոռի Բերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն թիվ 10 հավելվածի,

11) Կապի միջոցների հաշվարկը՝ համաձայն թիվ 11 հավելվածի,

12) Ինժեներական ապահովման տեխնիկայի հաշվարկը՝ համաձայն թիվ 12 հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

**2026թ. փետրվարի 27**
**գ. Լոռի Բերդ**